

ՍՈՒՐԵՆ ԱՂԱԲԱՔՅԱՆ. ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ
ՄՏՔԻ ԱՆԽՈՆՋ ՄՇԱԿԸ
(Ծննդյան 100-ամյակի առթիվ)*

Սուրեն Աղաբաբյանը XX դարի Հայ գրականագիտական մտքի դասականներից է: Անցյալ հարյուրամյակի 40-ական թվականների կեսերից մինչև իր



կյանքի վերջը (1986 թ.)՝ ավելի քան չորս տասնամյակ, նա բեղմնավոր գործունեություն է ծավալել Հայ նորագույն գրականության պատմության և տեսության, նշված ժամանակաշրջանի առաջատար հեղինակներից շատերի կյանքի ու ստեղծագործության հանգամանալից ուսումնասիրության և միջազգային ասպարեզում ներկայացման, գրական ընթացքի ճշմարտացի ու շահագրգիռ քննության, խորհրդահայ գրականության պատմության հատորների, ինչպես նաև դպրոցական դասագրքերի ստեղծման, գրական մամուլի ու գրական-գիտական հաստատությունների աշխատանքներին ակտիվ մասնակցության և այլ բնագավառներում:

Ս. Աղաբաբյանը ծնվել է 1922 թ. հունվարի 22-ին ՀԽՍՀ Ալեքսանդրապոլի գավառի Ղարաքիլիսա (այժմ՝ Վանաձոր) քաղաքում: 1944 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի եվրոպական լեզուների և գրականության բաժինը, որից հետո՝ 1945–1948 թթ., սովորել ՀԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրայում: 1945–1951 թթ. աշխատել է «Ավանգարդ» թերթի խմբագրությունում՝ որպես բաժնի վարիչ, խմբագրի տեղակալ, պատասխանատու քարտուղար: 1950–1951 թթ. եղել է «Սովետական գրականություն» ամսագրի քննադատության բաժնի վարիչը: Այնուհետև՝ շուրջ երեք տասնամյակ՝ 1954–1986 թթ., վարել է Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի խորհրդային գրականության բաժնի վարիչի պաշտոնը:

Ս. Աղաբաբյանի գրականագիտական առաջին լուրջ հետազոտությունը նվիրված էր Ն. Զարյանի ստեղծագործությանը՝ «Գյուղը Նաիրի Զարյանի ստեղծագործության մեջ», որի համար 1950 թ. ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան: Այնուհետև՝ շուրջ մեկ տասնամյակի ընթացքում, հրատարակվել են Ստ. Զորյանին, Գ. Մահարուն, Մ. Արազուն, Մ. Արմենին նվիրված գրականագետի փոքր ու մեծ ուսումնասիրությունները, իսկ «Ակսել Բակունց» հիմնավոր և ամբողջական մենագրության համար 1963 թ. Ս. Աղաբաբյանին շնորհվել է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Ն. Զարյանին և Ա. Բակունցին նվիրված գրականագետի մենագրությունները, ինչպես նաև «Հայ գրականության կեր-

* Ներկայացվել է 16. V. 2022 թ., ընդունվել է տպագրության 31. V. 2022 թ.:

պարները և ոճերը» խորագրով գրաքննադատական հոդվածների ժողովածուն (1980 թ.) լույս են տեսել նաև ուսանողներին: 1966 թ. ուսանողներին հրատարակվել է նրա կազմած ու խմբագրած «Հայ սովետական գրականության պատմություն» աշխատությունը, գրել է «Սովետական բազմազգ գրականության պատմություն» ուսանողների վեցհատորյակի առաջին և երրորդ հատորների (1970 թ.)¹ Հայ գրականությանը նվիրված գլուխները: Ս. Աղաբաբյանը նաև հեղինակել է միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի համար նախատեսված «Հայ սովետական գրականություն» դասագիրքը (1969–1986 թթ.): Մի քանի տասնամյակի ընթացքում լույս են տեսել գրականագետի՝ շուրջ երեք տասնյակ մենագրություններ, հոդվածների ժողովածուներ, Հայ գրականության պատմության հատորներում ընդգրկված հետազոտություններ և գրողների դիմանկարներ, հուշային պատումներ, այդ թվում՝ «Եղիշե Չարենց» երկհատոր (1973 թ., 1977 թ.), «Ակսել Բակունց» (1963 թ.) կոթողային աշխատությունները: Տասնամյակների բեղմնավոր և արդյունավետ գործունեության համար Սուրեն Աղաբաբյանը պարգևատրվել է «Պատվո նշան» (1972 թ.) և Ժողովուրդների բարեկամության (1982 թ.) շքանշաններով:

Հայ նորագույն գրականության պատմության ուսումնասիրությունը մշտապես եղել է գրականագետի գիտական հետաքրքրությունների ոլորտում: Անցյալ դարի 70-ական թվականներին արդեն հրատապ էր այդ շրջանի գրականության սկզբնավորման և զարգացման օրինաչափությունների բացահայտումն ու հիմնավոր քննությունը: 1978 թ. հրապարակված «Հայ սովետական գրականության պատմության հետազոտությունը (արդյունքներ և խնդիրներ)» հոդվածում անդրադառնալով այդ կարևոր խնդրին՝ Ս. Աղաբաբյանը նշում է, որ ընդամենը մի քանի տասնամյակ ընդգրկող խորհրդահայ գրականության պատմության «գլխավոր հանգույցների և զարգացման օրինաչափությունների հետազոտությունը չէր կարող ունենալ մեկնաբանական-քննական այնպիսի հարուստ ավանդներ, ինչպիսիք ունեին հին ու միջին և նոր դարերի գրական ընթացքի հետազոտողները»: Բայց դա դեռ «հիմնական դժվարությունը» չէր: Ավելի կարևոր էր այն, որ «այդ գրականությունը ոչ թե անցյալ ժամանակաշրջանների հայ գրականության պարզ և ուղղակի շարունակությունն էր», այլ պատմական նոր իրադրություններում ու հանգամանքներով պայմանավորված «գեղարվեստական նոր որակ, գրականության զարգացման նոր աստիճան»²: «Ակսել Բակունց» մենագրության մեջ անդրադառնալով դեռևս անցյալ դարասկզբի 10-ական թվականների իրավիճակի գնահատությունը՝ Ս. Աղաբաբյանը բանավիճում էր գրականության այն պատմաբանների հետ, որոնք մատնացույց էին անում «ոչալիստական տրադիցիաների նվազման իրողությունը» և այդ շրջանում տեսնում էին «միայն ունեցվածի քայքայում ու անկում»: Մինչդեռ, ըստ նրա, ճշմարտությունն այն է, որ 10-ական թվականների հայ գրականության պատմությունը դրսևորում էր «երբեք չեղած գեղարվեստական դիրքերի բևեռացում, գեղագիտական ըմբռնումների ակնհայտ հակասականություն ու ներքին պայքար, արվեստի խնդիրների

¹ Ս. Բ. Աղաբաբյան. Հոդվածներ, դիմանկարներ, հուշեր, Երևան, 1982, էջ 4:

² Նույն տեղում, էջ 5:

ըմբռնման տարբեր մոտեցումների ու հոսանքների չափազանց առատութ-
յուն»³: Այնուհետ՝ հետագա տասնամյակներին, հաղթահարելով «պրոլետար-
տական հույժ միակողմանի»՝ գրականությունն ազգային ավանդույթներից
կտրված, «դասակարգային ինքնամիտփաժության» մեջ պատկերացնող
հոսանքների ազդեցությունը, գրականագետի արձանագրմամբ, որոշակի
քայլեր կատարվեցին գրականության ընթացքի հետազոտության առավել
օբյեկտիվ և ճշմարիտ մեթոդաբանության հաստատման ուղղությամբ: Հատ-
կապես երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հրատապ դար-
ձավ «արհեստականորեն խզված ժառանգորդական թելերի վերականգնումը»:
Հետագա մի քանի տարիներին այդ նպատակի իրագործմանը զգալիորեն
նպաստեց նաև այն, որ տեական բացակայությունից հետո վերականգնվեցին
հանրապետի արգելված և անտեսված այնպիսի նշանակալից անուններ, ինչպես
Ե. Չարենցը, Ա. Բակունցը, Գ. Մահարին, Վ. Թովթովենցը, Լեո Կամսարը, Մ.
Արմենը, Ջ. Եսայանը ... Արդյունքում «... վերադասավորվեց գրականության
պատմության կառուցվածքը, ավելի ստույգ՝ վերականգնվեցին շղթայի բոլոր
օղակները», «վերացվեցին արխիվային և լրագրային «տաբուները», պայման-
ներ ստեղծվեցին «նորագույն գրականության բազմակողմանի ուսումնասի-
րության համար»⁴:

Հաջորդ կարևորագույն խնդիրը, որ ծառացած էր գրականագիտական
մտքի առջև, ստեղծագործական նոր մեթոդի՝ սոցիալիստական ռեալիզմի, ամ-
բողջական և ճշգրիտ սահմանումն էր: Նույնիսկ մինչև 70-ական թվականներն
այդ ասպարեզում դեռևս կային «սպիտակ տեղեր» ու «սուր անկյուններ»,
որոնք հետագա խորացման ու մշակման պահանջ էին առաջադրում⁵: Դրան-
ցից մեկը, ըստ Ս. Աղաբաբյանի, ստեղծագործական մեթոդի դիտարկումն էր
պատմական ընթացքի մեջ, սոցիալիզմի մեթոդի առաջացման, կազմա-
վորման և զարգացման օրինաչափությունների բացահայտումը: Դրսևորելով
լայն հայացք հայ նորագույն գրականության պատմության նկատմամբ, գրա-
կանագետն առաջադրում է «սոցիալիզմի ավանդների ավագանի լայնաց-
ման», «դարերից եկող ազգային ավանդների հետ» խորքային կապերի բա-
ցահայտման հրատապ խնդիրը: Մի բան, որ նորագույն գրականությունն
արդեն իսկ իրագործում էր՝ իր զարգացման ընթացքում «ստեղծագործական
լիցքեր» քաղելով «հնադարյան հայ պատմագրությունից և միջնադարյան
աշխարհիկ (նաև ոչ աշխարհիկ) քնարերգությունից», իս. Աբովյանի ու Բաֆ-
ֆու, Հովհ. Թումանյանի և Դ. Վարուժանի, Սիամանթոյի ու Վ. Տերյանի ստեղ-
ծագործություններից: Ընդունելով, որ «հասարակական դինամիկայի և ար-
վեստի շարժման փոխհարաբերությունն ինքնին բարդ երևույթ է և չի են-
թարկվում մեխանիստական նույնացման և կատարյալ դաշնության»՝ Աղա-
բաբյանը, սակայն, համոզված էր, որ, այդուհանդերձ, «դրանց մեջ գոյություն
ունի մի որոշ կարգ ու կանոն, ներքին փոխհամաձայնություն»⁶, ինչը և աշ-
խատում էր վեր հանել՝ հիմնվելով նաև միջազգային հատկապես՝ ուսս գրա-
կանագիտության մեջ արդեն իսկ այդ ուղղությամբ կատարվող փորձերի վրա:

³ Ս. Աղաբաբյան. Ակսել Բակունց, Երևան, 1971, էջ 21:

⁴ Ս. Աղաբաբյան. Հոգիվածներ, դիմանկարներ, հուշեր, էջ 15:

⁵ Նույն տեղում, էջ 17:

⁶ Նույն տեղում, էջ 18:

Ըստ այդմ, գրականագետը դիտարկում էր ռեալիստական մեթոդի զարգացման հետագիծը՝ քննադատական ռեալիզմ — «ռեներսանսյան ռեալիզմ» — թուամանյանական ռեալիզմ՝ «թումանյանական համադրությունների ուղղությունը» — սոցոբալիզմ չլիթայի տեսքով: Ի վերջո, հանգում է այն եզրակացության, որ «սոցիալիստական ռեալիզմի մեկնաբանության նորագույն տեսանկյուններից ամենաարդյունավետը թերևս «բաց համակարգի» («открытая система») տեսանկյունն է», որը լայն հնարավորություններ է տալիս «նորագույն գրականության բովանդակության բազմակողմանիությունը և ձևերի հարստությունը հետազոտելու» համար⁷:

Նշված պատմական ու տեսական հարցադրումների տեսանկյունից գրականագետի ուշադրության կենտրոնում էին նաև հայ նորագույն գրականության ազգային դիմագծի, ազգային հիմքերի բացահայտումը՝ վերագրվելու գրականության քարոզների մերժման տրամաբանությանը, գեղարվեստական արժեքների փոխադարձ ազդեցության և փոխադարձ հարստացման ընթացքի ակտիվացումը՝ համաշխարհային գրականության շրջանակներում, որտեղ Ս. Աղաբաբյանը շեշտադրում էր հատկապես «փիլիսոփայական-խորքային հաղորդակցության բացահայտումները ...»⁸:

Տեսական հիմնախնդիրները, բնականաբար, իրենց արտացոլումն ու հիմնավորումն էին գտնում քննվող ժամանակի շունչը և ոգին ներկայացնող առաջատար գրողների կյանքին ու ստեղծագործությանը նվիրված Ս. Աղաբաբյանի հետազոտություններում: Խոսքը, անշուշտ, առաջին հերթին Ե. Չարենցի և Ա. Բակունցի մասին է: Արդեն հիշատակված իր արժեքավոր մենագրություններում գրականագետը, ըստ էության շարադրում է նաև իսկական, բարձր գրականության ու գեղարվեստի չափանիշների իր ըմբռնումները: Շեշտադրումներից մեկը գրողի, արվեստագետի անհատական էության ճշմարտացի, խորքային բացահայտումն է: «Եղիշե Չարենց» աշխատության մեջ, օրինակ, «անվիճելի ճշմարտություն» համարելով այն պնդումները, թե «սերունդների գիտակցության մեջ Չարենցը մտել է որպես «մարգարե բանաստեղծ», «ռազմիկ ու սերմնացան», «պոեզիայի գրոշակակիր», որպես գրական խոշոր անհատականություն ու ժողովրդական հերոս»՝ նա անմիջապես էլ հավելում է. «Բայց վատն այն է, որ Չարենցի մասին գրված հոդվածների ու ակնարկների մեծ մասում չի երևում ամբողջ կյանքը ժողովրդի պատմության, հեղափոխության ու արվեստի մեջ այրած գրողի ու մտածողի կենդանի դեմքը: Շատ դեպքերում /.../ Չարենցի գեղարվեստական աշխարհը հանձնվում է «ընդհանուր օրինաչափությունների» և «ընդհանուր անդեմությունը», որի մեծ ախտյանն էր ինքը»: Այս առումով բերում է նաև ուկրաինացի գրող, բանաստեղծ Լեոնիդ Պերվոմայսկու կարծիքը, ըստ որի՝ Ե. Չարենցը «... մարդ էր բոլոր չափումներով և այդ պատճառով էլ եղավ իր երկրի, իր ժողովրդի, իր ժամանակի բանաստեղծը»:

Ս. Աղաբաբյան գրականագետի համար գրողի մեծության կարևորագույն հատկանիշներից էր նաև ներքին ընթացքի՝ ճանապարհի ու հոգեբանական,

⁷ Նույն տեղում, էջ 19–20:

⁸ Նույն տեղում, էջ 23:

⁹ Ս. Աղաբաբյան. Եղիշե Չարենց, հ. 1, Երևան, 1973, էջ 18:

ստեղծագործական աստիճանական զարգացման, ժողովրդի կյանքի և մարդու գոյության հիմքերի ճանաչողության ու արտացոլման անընդհատ խորացման անհրաժեշտությունը, որը նա արծարծում էր հիմնականում Ե. Չարենցի և Ա. Բակունցի օրինակներով: Բերելով Ե. Չարենցի տողերը՝ «Մի ուղի, որ վեր է տանում, // Մի ճանապարհ անհաս ...» («Էպիքական առավոտ»), նշում է, որ դա ոչ այլ ինչ է, եթե ոչ «Հորիզոնների լայնացում և հայացքի խորացում, պատմության նոր երևույթներն արտահայտող գեղարվեստական նոր սկզբունքների նվաճում»¹⁰: Ինչ վերաբերում է Ա. Բակունցին, ապա, գրականագետի համոզմամբ, «նա իր առաջ չի դնում կենցաղագրական ու ազգագրական խնդիրներ, /.../ նրա համար էականը մարդագիտական խնդիրներն են, ժամանակակից մտածողությունները իր երկրի ու նրա մարդկանց մասին: Ընթերցողի առաջ նա բացում է հայ գեղջկուհու հոգու պոեզիան և հայ աշխատավոր գյուղացու մեջ եղած մարդը ...»¹¹:

Ս. Աղաբաբյանի համար ճշմարիտ տաղանդի գլխավոր հատկանիշներից մեկն արդիականության զգացումն է, ինչը և, ըստ էության, ենթադրում է խորքային հայացք տվյալ ժամանակի, իրականության դեպքերին: Մի բան, որ գրականագետի կարծիքով, պայմանավորում է գրողի ստեղծագործական և՛ հակասությունները, և՛ ներքին խտացումների բուն միջուկի էությունը: Բանավիճելով, այսպես կոչված, գրական երևույթներին «հեռադիտակի հակառակ կողմից նայող» քննադատների մակերեսային տեսակետների հետ, թե «նորը դանդաղ է մուտք գործում» Ա. Բակունցի ստեղծագործության մեջ՝ նշում է, որ Բակունցը սովորական իմաստով «դեպքերի արվեստագետ» չէ, ավելի հակված է դեպի «հոգեբանական դեպքը»՝ նոր կյանքի հատկանիշների հոգեբանական յուրացումը: Ընդ որում, նրա հայացքն ամենևին էլ չըմբռնում է դեպի անցյալը, այլ ավելի շատ՝ դեպի ապագան, «կյանքի դինամիկայի ընկալումը»¹²: Նույն կերպ՝ Ե. Չարենցի պարագայում, ընդգծում է, որ «մեծ ճանապարհորդը փնտրում է ժամանակի դիմագիծն ու կենսագրությունը, մարդկային գոյության խորհուրդը, հայրենիքի ճակատագիրը ...»¹³: Մերժելով «թմբուկային, անկենդան բանաստեղծությունը», «հայեցողականության՝ ունեֆլեքսիայի ուղին»՝ պաշտպանում է «թափանցող և ներթափանցող, ժամանակի գաղտնիքները Մարդու մեջ հայտաբերող իմացական բանաստեղծությունը»¹⁴: Այդ որոնումների մեջ խորապես յուրացնելով նաև Ա. Պուշկինի, Հովհ. Թումանյանի, ռուսական ու միջազգային գրական այլ մեծագույն դեմքերի դասերը՝ գրականագետը, ի վերջո, հանգում է «թե պարզ, թե բարդ», այլ խոսքով՝ «բարդ, բայց ամենալայն մասսաներին հասկանալի սինթետիկ արվեստի» գեղագիտությանը: Ավելի ամբողջական ձևակերպմամբ՝ «Չարենցին մտահոգում էր մեծ ու խոր արվեստի, իր իսկ սահմանումով սինթետիկ արվեստի ստեղծման պատմական առաքելությունը, այն արվեստի, ուր ի մի են գալիս կյանքի արտահայտման խորությունը, կյանքի ճշմարտությունը և բանաստեղծական մեծ կուլտուրան»¹⁵:

¹⁰ Ս. Աղաբաբյան. Եղիշե Չարենց, հ. 2, Երևան, 1977, էջ 116:

¹¹ Ս. Աղաբաբյան. Ակսել Բակունց, էջ 43:

¹² Նույն տեղում, էջ 57:

¹³ Ս. Աղաբաբյան. Եղիշե Չարենց, հ. 1, էջ 7:

¹⁴ Ս. Աղաբաբյան. Եղիշե Չարենց, հ. 2, էջ 134:

¹⁵ Նույն տեղում, էջ 117:

Գրականագիտական նշված սկզբունքներն ու ելակետերը Ս. Աղաբաբյանը կիրառել է նաև հետագա գրական ընթացքի, ինչպես նոր՝ 50–60-ական, 70–80-ական թվականներին հանդես եկած սերնդային գրականության, այնպես էլ առանձին գրական անհատականությունների ստեղծագործության քննության ժամանակ՝ հանդես բերելով ոչ միայն խորաթափանց գրականագետ-տեսաբանի, այլև ընթացիկ գրական երևույթները ճշմարիտ գնահատող քննադատի իր անուրանալի կարողությունները։ Ասվածի վկայություններն են նշված տասնամյակների տաղանդավոր գրողներին տրված սեղմ ու դիպուկ բնութագրումները։ Ահա Հ. Շիրազի սպառնիչ դիմապատկերը. «Հովհ. Շիրազը, ինչպես երևի ոչ մեկը իր ժամանակակիցներից, ամբողջովին, անմնացորդ իր բանաստեղծական տողերի ու տների մեջ է։ Բանաստեղծությունից դուրս նա չունի և ոչ մի անձնական գաղտնիք, և ոչ մի անձնական ապրում։ /.../ Ճակատագիրը նույնացել է Քնարին»¹⁶։ Հր. Մաթևոսյանը՝ «Հրանտ Մաթևոսյանի արձակի ծանրության կենտրոնը, հավասարապես բոլոր պատումների «փիլիսոփայական քարը»՝ տիեզերական մեծ կյանքի, գոյության հավերժական հարցերի պատասխանների տենդագին, անընդհատ, անդուլ որոնումն է» (էջ 253)։ Պ. Սևակը՝ «Պարույր Սևակը լիովին տիրապետում է բառերի շիկացման արվեստին՝ ինչպես ոչ ոք իր ժամանակակիցներից։ Դրանով էլ բացատրվում է նրա բանաստեղծական տողերի ու տների քաղաքացիական հզոր ավյունը, նրա կրքերի ուժը և բացած խարույկի այրող տաքությունը, մտքերի բոցավառումը, մարդու հոգեկան աշխարհի գաղտնիքների ճանաչման խորությունը։ Իր բառերով ասած՝ երկրաբանի հետախուզումների խորությունը, որը մակերեսից գնում է դեպի ընդերքը, հոգեկան անձանոթ շերտերը։ Դեպի մարդը» (էջ 274)։ Վ. Դավթյանը՝ «Ճշմարիտ բանաստեղծությունը, բոլոր դարերում, ապրում և շնչում է ՀՈԳԵՆՅՈՒԹՈՎ. Իր պաշարները քաղում է պատմության տվյալ հատվածի հոգևոր բովանդակությունից։ /.../ Վահագն Դավթյանը արդեն իր գրական մոտեքից եղել է հոգենյութի քնարերգության դիրքերում» (էջ 293)։ Հ. Սահյանը՝ «Համո Սահյանը բառային իր ինքնատիպ համակարգով «սովորականացնում է» բանաստեղծությունը, ասել է թե՛ բացում է այն աղբյուրները, որոնք զարդանախշերի փոխարեն բերում են արտաքին աշխարհի գույների ու ձևերի ամբողջությունը» (էջ 325)։

Ս. Աղաբաբյանի խոսքը լեզվական ու ոճական առումով գեղարվեստական կաշառող արժեքայնություն է ստանում հատկապես հուշային պատումների մեջ։ Այսպես. «Երբ հեռվից հեռու նայում էինք Ավ. Իսահակյանին՝ միայնակ քայլելիս, հենված ձեռնափայտին, թվում էր, թե նրա հետ քայլում է մարդկային մի ամբողջ քարավան ... դեպի Սկիզբը, դեպի Գոյության գաղտնիքը ...» (էջ 179)։ Ահա և Դերենիկ Դեմիրճյանը. «Սուր, դիպուկ խոսքը անպակաս էր իրենից։ Միտքն անդադար եռման մեջ էր, միշտ լարված, ինչպես նետաղեղը» (էջ 194)։ Կամ՝ «1947 թվականին երևանյան փողոցներում անակնկալ հայտնվեց ինքը՝ Գուրգեն Մահարու հողանյութ կերպարանքը» (էջ 209) ...

Բազմակողմանի և բազմաշերտ էր Ս. Աղաբաբյանի հետաքրքրությունների շրջանակը։ Գրականության պատմության ու տեսության, ընթացիկ զարգացումների հիմնախնդիրները նա չաղկապում էր ազգային պատմության ու

¹⁶ Ս. Աղաբաբյան. Հոգվածներ, դիմանկարներ, հուշեր, էջ 97–98։

ճակատագրի, միջազգային հարաբերությունների և մարդու գոյաբանական լայն ու խորքային հարցադրումների քննության հետ: Այս տեսակետից հատկանշական են նրա արժեքավոր գրախոսականները գրող-պատմաբան Բագրատ Ուլուբաբյանի՝ «Հայ-ռուսական մերձեցումների» պատմությանը նվիրված «Ոսկե շղթա», Սերո Խանզադյանի՝ «Հայաստանի տարածքի վրա գտնվող գյուղերի պատմության»՝ գրականագետի բնորոշմամբ, «Հանրագիտարանային նշանակություն» ունեցող եռահատոր «Հայրենապատում», Աշոտ Արզումանյանի՝ նշանավոր արևելագետ, պատմաբան ու հնագետ Հովսեփ Օրբելու «գործի ու անձի ընդարձակ պատումը» ներկայացնող «Թայֆուն», անվանի պատմաբան Ծատուր Աղայանի՝ «1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի օրերից սկսած «Հայկական հարցի» դիվանագիտական ուղեծիրը» նշագծող «Հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի պատմությունից» հիմնարար աշխատությունների վերաբերյալ¹⁷:

Ս. Աղաբաբյանը հայ գրականագիտության այն դասականներից է, որի խորքային պեղումներով հատկանշվող աշխատություններն ու բազմաբնույթ հրապարակումները՝ ամբողջ գիտական վաստակը, անսպառ աղբյուր է մեր ժողովրդի այսօրվա և ապագա գրականասեր սերունդների համար:

ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՉՅԱՆ

Բ. Գ. Դ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ նոր գրականության բաժնի առաջատար գիտաշխատող, Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար: Գիտական հետաքրքրությունները՝ դասական և ժամանակակից գրականություն: Հեղինակ է 3 մենագրության, գրականագիտական և գրաքննադատական բազմաթիվ հոդվածների: pdemirchyan@mail.ru

¹⁷ Ս. Աղաբաբյան. Հոդվածներ, դիմանկարներ, հուշեր, էջ 346–360: